ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԱՐԵՎԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱ ԼԵՆԻՆԳՐԱԴՈՒՄ

1958 թ. մայիսի 12—17-ը ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքում տեղի ունեցավ արևելագիտական համամիութենական սեսիա՝ նվիրված ասուրա-բաբելական սեպագրերի վերծանման հարյուրամյակին։

Սեսիային մասնակցում էին Մոսկվայի, Լենինգրադի, Թբիլիսիի, Երևանի, Բաքվի, Տալլինի, Ռոստովի, Լվովի, Տուլայի գիտական հաստատությունների ներկայացուցիչները։

Սեսիայի նախագահն էր ակադեմիկոս Վ. Վ. Ստրուվեն, որը գլխավորում էր նաև սեսիայի կազմկոմիտեի աշխատանքները։

Սեսիայում կարդացվեց 42 զեկուցում՝ նվիրված ասուրագիտության, խեթագիտության, ուրարտագիտության, եգիպտաբանության և սեմական վիմագրության առանձին պրոբլեմների ուսումնասիրմանը։ Սեսիան սկսեց իր աշխատանքները մայիսի 12-ի առավոտյան, Արևելագիտության ինստիտուտի լենինգրադյան բաժանմունքի վարիչ ակադեմիկոս Հ. Ա. Օրբելու բացման խոսքով։ Ապա զեկուցումով հանդես եկավ Վ. Վ. Ստրուվեն. որը պատմեց ասուրաբաբելական սեպագրերի վերծանման գործում Ռաուլինսոնի, Խինկսի, Տալբոտի և Օպերտի հաջողությունների մասին և ապա հանդամանորեն կանգ առավ ռուս գիտնականների՝ Վ. Մ. Նիկոլսկու, Պ. Կ. Կոկովցևի, Վ. Կ. Շիլեյկոյի, Ա. Բ. Ռիֆտինի, Ն. Դ. Ֆլիտների ասուրագիտության բնագավառում ունեցած գիտական գործունեության վրա։ Վերջում զեկուցողը հանրագումարի բերեց նաև սովետական ասուրագիտության հաջողությունները։ Ընդհանրացնող բնույթ ուներ Ս. Մ. Բացիևայի զեկուցումը (Լենինգրադ) վերնագրված՝ «Ասուրագիտությունը արաբական երկրներում»։ Քննության առնելով արաբական մի շարք ասուրագետների և հնագետների աշխատությունները, զեկուցողը մատնանշեց, որ նրանք հնարավորություն են ընձեռում պարզելու Ն. մ. թ. V—II հազարամյակների Միջագետքի պատմության՝ շումերական քաղաքակրթության հետ անմիջական առնչություն ունեցող հարցերը։

Ն. Ռ. Յանկովսկայան (Լենինգրադ) քննության առավ Ասորեստանի, Արապխիի և Ալալախի համայնքները Ն. մ. թ. II հազարամյակում։ Նա իր ուշադրությունը սևեռեց մեծընտանիք համայնքների զարգացման վրա, մինչև այն շրջանը, երբ գոյություն ունեցող սիստեմը փոխարինվեց ռազմա-վարչական բաժանումով։

Բովանդակալից էր Ս. Յու. Լուրիեի (Լվով) «Միկենյան արձանագրությունները և Հին Արևելքը» զեկուցումը, որտեղ ի հայտ բերվեց Հին Արևելքի մի շարք լեզուների ազդեցությունը Միկենյան լեզվի վրա։ Ուշադրությամբ լսվեցին նաև Վ. Վ. Ստրուվեի «Ուրուկագինայի և Լուգալզագգիսիի պատերազմի հիմնական դրվագները», Յու. Բ. Յուսուֆովի (Բաքու) «Երկրորդ հազարամյակի Էլամական պարտային փաստաթղթեր Սուզա քաղաքից», Վ. Կ. Աֆանասևայի (Լենինգրադ) «Ուր-Նամու օրենսդիրի և նրա ժամանակի մասին», Մ. Լ. Գելցերի (Տալլին) «Հողային հարաբերությունները Ռիգարիտում», Դ. Գ. Ռեդերի (Մոսկվա) «Եգիպտոսի հնագույն հիշատակումը սեպագիր տեքստերում», Լ. Ա. Լիպինի (Լենինգրադ) «Ս—շադկապի նշանակությունը Համմուրարի օրենքներում» զեկուցումները։

Խեթագիտությունը ներկայացված էր մի քանի զեկուցումներով։ Թ. Վ. Գամքրելիձեն (Թբիլիսի) «Ակկադա-խեթական խմբի սեպագրային սիստեմը և խեթական գրության ծագման հարցը» զեկուցման մեջ հնագրական և ուղղագրական առանձնահատկությունների քննությամբ ցույց տվեց, որ խեթական գրությունը փոխ է առնվել ոչ թե խուրիտականից, ինչպես կարծում են մի շարք գիտնականներ, այլ անմիջականորեն ակկադական աղբյուրից, III և II հազարամյակների շեմքին Հյուսիսային Սիրիայում տարածում գտած ակկադական սեպագրերից։ Գ. Գ. Գեորգաձեն (Թբիլիսի) խոսեց Պալա և Տումանա խեթական մարզերի

տեղագրման մասին։ Մի շարք զեկուցումներում արծարծվեցին խեթերեն լեզվի և քերականության կարևորագույն հարցեր։ Վ. Վ. Իվանովը (Մոսկվա) զեկուցեց խեթական նախադասության կառուցվածքի մասին։ Ի. Ն. Դունաևսկայան (Լենինգրադ) նախախեթերենի բայական ածանցի մասին, Ա. Ն. Սավչենկոն (Ռոստով)՝ «Խեթական բայի մեդիալ ձևը պատմա-համեմատական լուսաբանմամբ» թեմայի շուրջը, Բ. Ա. Կազանսկին (Լենինգրադ) զեկուցեց Կարա-Թեփեի երկլեզվյան հայտնի արձանագրության մասին, իսկ. Է. Ա. Մենաքեն (Թբիլիսի) կանգ առավ խեթական օրենսդրքերում տեղ գտած մի հատուկ արտահայտության մեկնաբանման հարցի վրա։

Բազմաթիվ էին Ուրարտուի նյութական կուլտուրային, լեզվին, պատմությանը նվիրված հաղորդումները։ Ն. Վ. Հարությունյանը (Երևան) պատմեց Կարմիր-բլուրի պեղումներից 1956 թ. հայտնաբերված նոր կավե տախտակի մասին։ Զեկուցողը բերեց տեքստի թարգմանություն և մեկնաբանումը, ըստ որի այդ տախտակը իրենից ներկայացնում է Սարդուր III թագավորի կարգադրությունը՝ Կուդունիի քաղաքի ինչ-որ հողերի և երկու ստրուկների հանձնման մասին Կուտուբիլի ցեղի Կուերա իշխանավորին։

Բ. Բ. Պիոտրովսկու (Լենինգրադ) հաղորդումը վերաբերում էր Կարմիր-բլուրի պեղումներից հայտնաբերված ասուրական կնիքներին։ Կարմիր-բլուրում գտնված ասուրական առարկաները վաղուց են գրաղնցրել մասնագետների ուշադրությունը։ Այդ առարկաների թվում ուրույն տեղ են գրավում ասուրական կնիքները, որոնք իրենց առանձնահատկություններով, հատկապես սյուժետային, տարբերվում են ուրարտականներից։ Այս կնիքները իրենց մի շարք հատկանիշներով որոշակիորեն առնչվում են ասորեստանյան կենտրոններում հայտնաբերված կնիքների հետ։ Գ. Խ. Սարգսյանը (Երևան) հանդես եկավ «Ուրարտական թագավորական դինաստիայի սկզբնավորման մասին» զեկուցումով։ Սարգոնի արշավանքը պատկերող արձանագրությունների հիման վրա, զեկուցողը գալիս է այն եզրակացության, որ Ուրարտույում շարունակում էր գոյություն ունենալ թագավորների տոհմական բնակավայրը՝ Ուրբուն, որը գտնվում էր Տուշպայից ոչ հեռու։ Ապա հենվելով Ն. Ադոնցի մի քանի իմացարանական նույնացումների վրա, առաջարկում է ենթադրել, որ Լուտիպրին Արամեի (Ն. մ. թ. IX դար) մականունն էր, որը ծագում էր Ուրբու բնակավայրից և հանդիսանում էր Ուրարտական թագավորական դինաստիայի հիմնադիր։ Հ. Ա. Մարտիրոսյանը (Երևան) հաղորդեց Նոր-Արեշի ուրարտական գամբարանաղաչտի մասին։ Խոսքը վերաբերում է Երևանի հարավային մասում գտնված երեք աճյունավոր անոթներին, որոնց մեջ հայտնաբերված առարկաները թույլ են տալիս վերականգնելու ոչ միայն ուրարտական ոգամիկի և բարձրագույն պաշտոնյայի արտաքին տեսքը, այլև պարզելու Մերձավոր Արևելքի, Փոքր Ասիայի և Անդրկովկասի մշակութային փոխհարաբերությունները։

Ի. Մ. Դյակոնովը (Լենինգրադ) կանգ առավ Կարմիր-բլուրից հայտնաբերված ուրարտական թագավորների և պաշտոնական այլ անձանց նամակների վրա։ Նա հաղորդեց, որ մինչև այժմ մեզ հայտնի են 9 ամբողջական և հատվածավորված նամակ, որոնց մի մասը արդեն մեկնաբանման է ենթարկվել։ Նամակները հասցեագրված են մարզի կառավարչին և թագավորական տնտեսության բարձրագույն ներկայացուցիչներին, իսկ ըստ իրենց բովանդակության արտահայտում են տնտեսական և պետական նշանակություն ունեցող միջոցառումներ։ Կ. Լ. Հովհաննիսյանը (Երևան) հաղորդեց Երևանի հարավային մասում գտնվող Արինբերդի ուրարտական հուշարձանի պեղումների արդյունքների մասին։ Հնագիտական աշխատանքները բացահայտել են մի շարք կառուցվածքներ, որոնք վերաբերում են բերդի հիմնադիր Արգիշտի I (VIII դար) թագավորի ժամանակաշրջանին։ Դրա հետ մեկտեղ, ինչպես պարզել է Բ. Բ. Պիոտրովսկին, շերտագրական դիտողությունները թույլ են տալիս ենթադրելու, որ բերդը իր գոյությունը պահպանել է նաև ավելի ուշ ժամանակաշրջանում (Ն. մ. թ. VI—IV դարերում)։

Վ. Վ. Շլյոմը (Մոսկվա) զեկուցեց Տուարածինի և Գուրկու երկրների տեղագրման մասին։ Զեկուցողը այն կարծիքին է, որ դեռևս Արգիշտի I-ի արձանագրություններում հիշատակվող այս երկրները չպետք է որոնել Արածանիի շրջանում, քանի որ վերջինս նվաճվել էր դեռևս Մենուայի ժամանակ։ Վերոհիշյալ երկրները զեկուցողը առաջարկում է տեղադրել Եփրատից արևմուտք։

Մի քանի զեկուցումներ նվիրված էին Աքեմենյան Իրանի պատմության հարցերին։ Է. Ա. Գրանտովսկին (Մոսկվա) զեկուցեց Նաիրի-Ուրարտու տերիտորիայի վրա իրանական տարրերի գոյության մասին Ն. մ. թ. IX—VIII դարերում։ Հիմնական նյութը տալիս է ասուրական և ուրարտական տեքստերում պահպանված հատուկ անունների վերլուծությունը։ Իրանական տարրերի առկայությունը հաս-

տատվում է IX դարի առաջին տասնամյակներում Վանի հարավային շրջաններում և Ուրարտուի արևմուտքում, մինչև Եփրատ։ VIII դարին վերաբերող մի շարք տեղանուններ Ուրարտուի արևելյան շրջաններում (Ուրմիայից հյուսիս և հյուսիս-արևելք) իրանական ծագում ունեն։ Ուրարտա-իրանական երկարատև փոխհարաբերությունների մասին են խոսում ուրարտերենում իրանական փոխառությունները, ինչպիսիք են՝ «արծիբի» (արծիվ) և «բագա» (աստված) տերմինները։

Մ. Ա. Դամդամաևի (Մոսկվա) զեկուցումը նվիրված էր Ռեհիսթունյան արձանագրության թվագրման հարցին։ Ըստ զեկուցողի կարծիքի, արձանագրությունը փորագրվել է Ն. մ. թ. 524 թ. նոյեմբերի 27-ի և 519 թ. սեպտեմբերի 29-ի միջև ընկած ժամանակաշրջանում։

Աքեմենյան Իրանում տեղի ունեցող ժողովրդական ապստամբությունների մասին պատմեց Վ. Օ. Տյուրինը (Տուլա)։ Պերսեպոլիսի արխիվի նյութերի հիման վրա նա պարզել է, որ Դարեհի օրոք տեղի է ունեցել ժողովրդական շարժում, որի մասնակիցները կոչվում էին «անտակներ»։

Հին Եգիպտոսի պատմության, նյութական կուլտուրայի և արվեստի ուսումնասիրմանը նվիրված էին մի շարք զեկուցումներ՝ Մ. Է. Մատյեի (Լենինգրադ) «Բուրգերի արձանագրությունների մեկնաբանման մասին», Վ. Ավդիևի (Մոսկվա) «Հին Եգիպտոսի մշակութային ժառանգության հարցի շուրջը», Տ. Ն. Սավելևայի (Մոսկվա) «Եգիպտոսի հին թագավորության ժամանակաշրջանի մասնավոր հողատիրության բնույթի մասին», Ի. Ա. Լապիսի (Լենինգրադ) «Հյուկսոսների ժամանակագրության հարցի շուրջը» և այլն։

Սեսիայում լսվեցին նաև զեկուցումներ սեմական վիմագրության բնագավառից, այդ թվում՝ Ա. Գ. Լունդինի (Լենինգրադ) «Հարավ-արաբական արձանագրությունների ժամանակագրության հարցի արդի վիճակը», Դ. Ա. Տիրացյանի (Երևան) «Արտաշես I-ի նորագյուտ արձանագրությունը Սևանա-լճից» և Մ. Լ. Ամուսինի (Լենինգրադ) «Նաբոնիդի՝ Բարելոնի թագավորի «աղոթքների» ձեռագրի Քումրանի պատառիկը»։

Յուրաքանչյուր նիստի վերջում զեկուցումները քննարկվում էին։ Մի շարք զեկուցումներ հատկապես աշխույժ վիճաբանությունների առիթ հանդիսացան։

Մայիսի 17-ին եզրափակիչ նիստում որոշում ընդունվեց Հին Արևելքի պատմաբանների և բանասերների ասոցիացիա ստեղծելու մասին։

Այս սեսիայում վառ կերպով դրսևորվեցին սովետական արևելագիտության խոշոր նվաճումները, նրա բազմակողմանիությունը, արծարծված հարցերի մշակման խորությունը։ Հատկապես պետք է նշել երիտասարդ գիտական կադրերի ակտիվ մասնակցությունը սեսիային։

Գ. ՏԻՐԱՑՅԱՆ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՆԻՍՏԵՐ

Երևանի Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում մեծ հանդիսավորությամբ նշվեց հայ ականավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի ծննդյան 80-ամյակը։

Երեկոն բաց է անում Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր ճարտարապետության գործերի վարչության պետ Ռ. Աղիզբեկյանը։ Ալեքսանդր Թամանյանի կյանքի և գործունեության մասին զեկուցեց Հայաստանի ճարտարապետների միության վարչության նախագահի տեղակալ Վ. Հարությունյանը։ Հանգամանորեն վերլուծելով ճարտարապետի անցած ստեղծագործական ուղին, նա նշեց այն մեծն ու նորը, որ հատուկ էր Թամանյանի արվեստին և որով նա հարստացրեց հայ բազմադարյան ճարտարապետական կուլտուրան։ Թամանյանի սովետական շրջանի ստեղծագործությունը, ասում է զեկուցողը, միավորում է դարերով մշակված և սովետական շրջանում նոր բովանդակություն ստացած հայ ճարտարապետության լավագույն սկզբունքները։

Ալեքսանդր Թամանյանի մասին հուշերով հանդես եկան ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը, Հայկ. ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտ. Կարինյանը, ճարտարապետ Մ. Մազմանյանը և Տնտեսագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ա. Եղիազարյանը։

* * *

Վերջերս լրացավ սովետահայ արձակի ականավոր ներկայացուցիչներից մեկի՝ ռևոլյուցիոներ-գրող Մովսես Արազու ծննդյան 80-ամյա-

կը։ Այդ հոբելյանի նշանավորման համար Հայ-ֆիլհարմոնիայի փոքր դահլիճն էին հավաքվել գրողներ, գրականագետներ, արվեստի և կուլտուրայի գործիչներ, բազմաթիվ աշխատավորներ։

Ներունազարդ գրողին դեպի նախագահության սեղան են ուղեկցում ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Թովմասյանը, Հայաստանի Մինիստրների Սովետի նախագահ Ա. Քոչինյանը, հին բոլշևիկ, ակադեմիկոս Արտ. Կարինյանը, գրողներ Ստ. Զորյանը, Գ. Սարյանը և ուրիշներ։

Երեկոն բաց է անում գրող Գ. Սևունցը։ Արազու կյանքի և ստեղծագործական ուղու մասին զեկուցում է արձակագիր Ս. Խանզադյանը։ Նա նշում է այն կարևոր դերը, որ ունեցել է Սբազին իր ստեղծագործությամբ սովետահայ նոր արձակի կազմավորման գործում։ Այժմ էլ գրողը, չնայած իր պատկառելի տարիքին, շարունակում է ստեղծագործել, աշխատում է «Իսրայել Օրի» պատմական վեպի վրա։ Ծննդյան 80-ամյակի առթիվ հոբելյարին ողջունեցին բանաստեղծ Գ. Սարյանը, ակադեմիկոս Արտ. Կարինյանը, Կիրովի գործարանի աշխատավորների անունից Պ. Պապյանը, Պետական համալսարանի ուսանողուհի Հ. Աբեղյանը, ուսուցչուհի Հ. Զոհրաբյանը, Հայպետհրատի գլխավոր խմբագիր Վ. Մկրտչյանը և պատանի պիոներների պատվիրակությունը։

Վերջում շնորհակալության խոսք ասաց հոբելյարը։ Բանաստեղծ Հր. Հովհաննիսյանը ընթերցեց Մ. Արազու անունով ստացված ողջույնի հեռագրերը։

* * *

Հայաստանի արվեստի աշխատողների տանը նշվեց անվանի բանահավաք Գարեգին Լևոնյանի ծննդյան 85-ամյակը։

— Գարեգին Լևոնյանը այն մարդկանցից էր, որոնք մինչև կյանքի վերջը մնում են իրենց գործին հավատարիմ, որոնց հոգու փայլը չի խամրում տարիների խտացող մշուշից,— այսպես է սկսում իր բացման խոսքը ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը։

Գ. Լևոնյանի կյանքի ու գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ինճիկյանը։ Չկա հայ արվեստի մի բնագավառ, ասում է նա, որին ձեռք զարկած չլինի Գարեգին Լևոնյանը։ Նա բավական արժեքավոր ուսումնասիրություններ է թողել հայ գրականության, երաժշտության, ճարտարապետության, պարարվեստի հարցերի վերաբերյալ։ Նրա «Հայ պարբերական մամուլը», «Հայ գիրքը և տպագրության արվեստը», «Էջեր հայ երաժշտության պատմությունից» աշխատությունները գալիս են մեզ համոզելու, որ հանձին Գարեգին Լևոնյանի մեր ժողովուրդն ունեցել է խոշոր մտածող և արվեստագետ։

Երեկոյում Գարեգին Լևոնյանի մասին հուշերով հանդես եկան Մ. Աղայանը, Լ. Սաղաթելյանը, Մ. Մազմանյանը, Ն. Զարյանը։

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԻՏՆԱԿԱՆ Ա. ՍԱՆՃՅԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Վերջերս Հայաստան այցելած ամերիկահայ գիտնական դոկտ. Ավետիս Սանճյանը ծանոթացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի մի շարք ինստիտուտների, ինչպես նաև Պետ. համալսարանի, Մատենադարանի և այլ գիտական հաստատությունների աշխատանքի դրվածքի հետ։

Հայաստանից մեկնելուց առաջ նա դիմեց Հայկական ՍՍՌ Գիտ. ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանին հատուկ մի նամակով, որտեղ խոսելով իր ճանապարհորդության նպատակների մասին ջերմ շնորհակալություն է հայտնում իրեն ցույց տված աջակցության համար։

«Ձեր բարեհաճ կարգադրությամբ,— ասված է նամակում,— առաջին հերթին այցելեցի այդ կենտրոններեն կարևորագույնին — Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայիդ։ Երեք շաբաթվան կարճ ժամանակամիջոցին մեջ, ինձի հաջողեցավ այցելել Ակադեմիայիդ հասարակական գիտություններու ինստիտուտները և զրույցներ ունենալ անոնց դիրեկտորներուն, բազմահմուտ և բազմավաստակ գիտնականներուն հետ։ Բաց ասած, այցելեցի Պետական համալսարանը, Մատենադարանն ու գրադարանները, թանգարանները, պատմական հուշարձանները, հնագիտական պեղումներու վայրերը և զանազան հրատարակչությունները— միշտ արժանանալով դիրեկտորներուն և պաշտոնեից ամենաջերմ ընդունելության և լայն աջակցության։

Այս այցելություններով՝ ինձ հնարավոր եղավ լայն ծանոթություններ քաղել Հայաստանի մեջ վերջին քանի մը տասնամյակներուն կատարված կուլտուրական վիթխարի աշխատանքներուն և յուրաքանչյուր հաստատության հառաջիկա գիտա-հետազոտական ծրագիրներուն մասին։

Մեծարգո նախագահ, շնորհապարտ եմ ձեզի, և այն բոլոր գիտնականներուն և պատասխանատու անձերուն, որոնք Հայաստան այցելությունս վերածեցին սրտառուչ փորձառության մը»։

Նամակի վերջում դոկտ. Ա. Սանճյանը խնդրում է իր «ամենաջերմ զգացումներու թարգմանը հանդիսանալ» բոլոր այն հիմնարկությունների վարիչների ու գիտնականների մոտ, որոնք իրեն ջերմ ընդունելություն և աջակցություն են ցույց տվել իր այցելությունների ժամանակ և որոնցից յուրաքանչյուրին ինքը գրելու հնարավորություն չունի։